

— Բայց Սմբատ կրնա՞յ բան մ'ընել:

— Ո՛վ գիտե, տեսնենք, ես բանի մը յոյս չունիմ, կ'երթամ մեր լեռները, ինչ որ կրնամ կը ջանամ ընելու. իմ պարտքս մահվնէ չի վախել եւ չի փախ չիլ է, այդ աստուծոյ շնորհքով կրնամ կատարել: Մնաս բարով, Գուրգէն իշխան, եթէ աստուած ուզէ դարձեալ կը տեսնուինք:

Յովնան Երուանդակերտի ճամփան բռնեց, իսկ իշխանը կ'ուղղուէր դէպի Բլուր եւ չէր կրնար չի դարձնել գլուխը երբեմն այդ լեռնցի մարդուն ետեւէն, որ առանց ետին նայելու կ'երթար անսասան, ուր որ պարտքը գինքը կը տանէր. վասնզի ինք միակ մարդն էր նոյն օրը բոլոր Հայաստանի մէջ, որ գիտէր թէ ի՞նչ պիտի բներ: